

ԲԱՌԱՔՆՆԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բանասիր. գիտ. դոկտոր Վ. Դ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանից» հետո էլ բազմաթիվ հայերեն բառեր մնում են դեռևս չբացատրված կամ սխալ մեկնաբանված: Խոսքը չի վերաբերում բառերի ծագումնաբանական ստուգաբանությանը. հայտնի է, որ հայերենի բազմաթիվ բառեր կարոտ են ծագումնաբանական բացատրության (գուցե թե այդ մարդը իր գաղտնիքներից շատերը թաքցնի հայագիտության հետամտությունից անսահման ժամանակներ): Այստեղ մեր խոսքը վերաբերում է բառի սովորական բառարանական բացատրությանը:

«Նոր բառգիրք հայկազեան լեզուի» արժանավորապես վայելած հեղինակությունը այնքան ճնշող է եղել, որ հետագա շատ բառարանագիրներ չեն հանդգնել այդ գրքի բացատրության սահմաններից դուրս գալ և բառի բացատրությունը ինքնուրույն մոտենալ: Այդ է պատճառը, որ շատ բառերի բացատրությունը մեզ հասել է ավանդաբար, ոչ ճիշտ մեկնաբանությամբ՝ մեծ մասամբ հիշյալ բառարանի մեծ հեղինակության ճնշման հետևանքով:

Մեր կենդանի բարբառները այսօր էլ մեծ դեր ունեն հայերենի բառերի իմաստային ճշտման ասպարեզում, ուստի բարբառների օգտագործումը այդ մարդում շատ է կարևոր և արդյունավետ:

Այս հոդվածում մենք փորձում ենք բացատրել մի քանի մութ մնացած բառեր և ցույց ենք տալիս մի շարք հնագույն և հազվագյուտ բառերի առկայությունը Աբովյանի շրջանի Կոտայք գյուղի խոսվածքում: Հնագույն բառերի միջոցով ճշտում ենք խոսվածքում մթնած բառերի նշանակությունը և խոսվածքի միջոցով պարզում հնագույն բառերի անորոշ ու դեռևս չմեկնաբանված նշանակությունները:

Սկսենք վեճի առարկա հանդիսացող ցույց բառից, որը մինչև այժմ ճշտիվ չի բացատրված: Այս բառը «Հայերեն արմատական բառարանում» բացատրված է ուրախություն, խաղ, երգ, պար, կայքյուն: Երգ և պար բառերը հեռու են իրարից, դա ցույց է տալիս, որ բառը չի հասկացվել, ենթադրաբար իմաստ է վերագրվել բառին: «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանը բացատրում է «Որպէս թէ ցունծք՝ այսինքն ցնծութիւն, կամ ցոյցք ուրախութեան, հանդէս, երգ ուրախութեան, ձայն նուագաց կամ նուագ ձայնից»: «Նոր բառգրքից» հետո եղած բացատրությունները ավելի հեռու են: Էմինը ցույց-ը դարձնում է ցոյց, Մառը կապում է վրացերեն բութա՝ լուսին բառի հետ:

Ցույց բառը առաջին անգամ դործածել է Ազաթանգեղոսը հետևյալ նախադասությամբ. «Նրգս առեալ բարբառեցան կայթիւք վազելով՝ ցուց բարձեալ մարդկանն՝ կէսք զբաղաբամէջն լցին խնճոյիւք»¹: Ցույց բարձեալ նշա-

¹ Ա զ ա թ ա ն գ ե ղ ո ս, Պատմություն Հայոց, Տփղիս, 1909, էջ 99:

նականում է վազելով: Այդտեղ ցուց բառձեռքով բացահայտիչն է վազելով բայի: Իսկ վազել նշանակությամբ ստույգ կիրառություն ունի նարեկացին: Քիչ թե շատ գրաբար իմացողը գիտի նաև գրաբարի սեռականով հավելագրության մասին. տեսիլ երազոյ, դէմք երեսաց, անձուկ սիրոյ, թիկունք օգնականութեան, վախճան կատարածի և այլն: Ցուց բառը ճիշտ նույնպիսի սեռական հավելագրությամբ գործածել է նարեկացին «Մատենան ողբերգութեան» մեջ՝ հետևյալ նախադասությամբ. «Կաքաւս կայթից և ցուցս վազից խաղալկացն գիւաց գարշելեաց ճարտար խաբողաց ծուլութեամբս իմով շնորհեցի»²: Այսպիսի զույգ հավելագրությամբ կախալ կայթից (կաքավ և կայթ նշանակում են պար) և ցուցս վազից (ցուց և վազք նույնիմաստ բառեր են) նարեկացին մեզ բացատրում է ցուց բառի նշանակությունը, որ է՝ վազք: Հին հայոց մեջ նավասարդյան և այլ տոնահանդեսների ժամանակ հրապարակներում վազքի մրցություններ էին կազմակերպվում, և երգերի ու նվագի տակ վազում էին. ինչպես երևում է, պարերգերից բացի եղել են նաև ցցոց երգեր, որոնց մասին հիշատակում է խորենացին: «Հինք Արամաղնեայց ի նուագս փանդոան և յէրզս ցցոց և պարուց զայսոսիկ ասեն յիշատակաւ»³: Այսպիսով՝ մինչև այժմ չբացատրված ցուց բառը նշանակում է վազք:

Պառակաւս բառը «նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանը բացատրում է «երագազ, ուռկան որսորդաց, էրէոց՝ իբրև փարախ, շրջափակ», ապա բերված է Ագաթանգեղոսից օրինակ՝ «Ժամ տուեալ որսոյ ամենայն զօրացն՝ ածեալ կուտեալ զպառակաւն՝ խուճապական ձգեալ»: Սրան հետևում է Ինուզանդի օրինակը՝ «Սակաւ սպասաւորօք հանդերձ և որսոցն պառակաւնօք»: Այս բացատրությանը հետագայում ավելացվել է որսի շնեք բացատրությունը: Այս բառի բացատրության համար բանալի կարող է ծառայել պառակաւս բառը, որ գործածված է Պիտոյից գրքում. «Թակարդեօքն և սլառակական խմբիւք, եւ այլով հնարաւոր գործեօք զբովանդակն արգելուիւ վայր»⁴: Պառակաւս խմբիւք նշանակում է մարդկանց խմբերով: Պառակաւս բառը ո՛չ երագազ է նշանակում և ո՛չ էլ որսի շուն կամ շրջափակ: Այդ բառը նշանակում է խուճապ առաջացնող մարդկանց խումբ: Որսի ժամանակ ազնվականները կամ թագավորները հավաքում էին մարդկանց բազմություն և նրանց միջոցով մեծ շրջափակ էին ստեղծում որսատեղիում. որսը խուճապահար փախչելիս հանդիպում էր աղաղակող պառականին և ետ էր դառնում, իսկ հետապնդող որսորդները խփում էին որսը: Ագաթանգեղոսի՝ «զպառակաւն խուճապական ձգեալ» նշանակում է մարդկանց խումբը (պառական-ը) խուճապ էր գցում: Այդ սովորությունը կար նաև կալվածատիրական Ռուսաստանում:

Դեռ բառը «նոր բառգիրք հայկազեան լեզուի»-ն բացատրում է «հարկեցուցիչ, հրապուրիչ» բառերով, որ անպատճառ սխալ է: Աճառյանը ճիշտ է բացատրում «Արմատական»-ում. ղազ նշանակում է նենգ և բերում է ղազ դենել

² Դրիգոր Նարեկացի, Մատենան ողբերգութեան, Բուկնոս-Այրէս, 1948, էջ 49:

³ «Մովսիսի խորենացոյ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1913, էջ 27:

⁴ «նոր բառգիրք հայկազեան լեզուի», էջ 600, ուր պառական բառը բացատրված է. «Որքինչ անկ է պառականաց՝ ուռկանաց որսորդաց կամ բարակաց, իմա շանց որսորդաց»:

կապակցությունը Ոսկեբերանից, որ նշանակում է նենգել: Ապա բերում է Փիլոնից և Սարկավագից օրինակներ. «Կինն ելոյծ զնա պատիր, աղու և դագ բանիք»: «Դագ և աղու բանիքն պատրանս»⁵: Այս ամենը ճիշտ է անշուշտ, սակայն Աճառյանը այս բառի համար գավառական բաժին չունի, որ ավելի կհաստատեր իր բացատրությունը: Մեր խոսվածքում (Կոտայքի շրջանի Ելղովան, այժմ Աբովյանի շրջանի Կոտայք գյուղի) դագ ցալ նշանակում է նենգել, նենգություն վնասել: Մեղանում սովորական խոսք է «Լավ դա՛մ էկավ»՝ այսինքն նենգությամբ վնասել:

Շառափ, որ նշանակում է հորդ անձրև, գործածված է միջնադարյան տաղերգուների երգերի մեջ: Աճառյանը, բերելով վկայություններ Քուչակից և «Հայ էջերից», համարում է նորագյուտ բառ: Ակնում նույնպես շառափ տեղատարափ է նշանակում: Մեր խոսվածքում հղել է շառափել բայ, որ հետագայում ժողովրդական ստուգաբանությամբ դարձել է շրբրփիալ. ցարծվել է բնածայնական բառ. «Ինչ անձրև ա, շրբրփիում ա»՝ այսինքն շառափում է: Դրեմն մեր շրբրփիալ-ը նշանակում է շառափել, որ շառափ բառից է:

Պախիմ բայը, որ նշանակում է վախենալ, շատ հին կիրառություն ունի: Աստվածաշնչում կարդում ենք. «Քուն հատալ յերեսաց իմոց, պախեալ եմ ի սիրտ իմ, ի հոգոց իմոց» (Ա Մակ., 2, 10): Սրանով բառի գործածությունը չի դադարում, սակայն այս բառը շատ է հնացած և այսօր էլ թվում է բացարձակորեն մեռած: Մեր և այլ խոսվածքներում մեկին (հատկապես երեխաներին) վախեցնելու համար ասվում է՝ փրխկ՝ այսինքն վախեցիր: Այս փրխկ-ը, որ թվում է բնածայնական բառ, պախիմ բայից է, որ պահպանվել է խոսվածքներում իբրև բառի վերջին մնացորդ. այսինքն իբրև մանկական բառ: Փրխկ-ը հին պախ արմատն է, որ վաղուց յեզվից դուրս է մնացել:

Նման մի բառ է բայ բառը, որ Աճառյանը բացատրում է «գաղանների որջ կամ ձմեռվա քառասունը»: Եզնիկը ունի բայոց. «Յորս են և ազգմունք ինչ բնականը, որովք հանդերձելոց իրիք իրաց ազգ լինիցի նոցա... և արշոյ՝ յառաջագոյն քան զձմեռ ի բայոց մտանելոյ»⁶: Ինչպես տեսնում ենք, բառարանները ենթադրաբար բացատրում են ուրջ կամ քառասունք, մինչդեռ բայ պարզապես բուն է նշանակում, որ մնացել է օրորոցային երգերի մեջ: Մայրը հրեխային քնեցնելիս՝ մինչև այսօր էլ հրգում է բայ, բայ, կամ ասում է բայ-բայ՝ արա, որ փրխկ-ի նման մտածվում է իբրև մանկական անորոշ բառ կամ օրորոցային երգի հանգերգային բառ, մինչդեռ դա շատ հին բառ է, որ քուն է նշանակել և այսօր արդեն գրեթե մեռել է:

Դրոշ բառը, որ նշանակում է կոտ, ունի շատ հին կիրառություն. «Դրոշեն զդրոշս քանդակաց» (Սիր., ԼԲ՝ 28), «Եւ կոոց և դրոշելոց հանգամանք առ Թարայիւ հարբ Աբրահամու»⁷: Այս բառը, որ բոլորովին մեռած բառ է, պահպանվել է մեր խոսվածքում: Հնում ամենածանր վիրավորական խոսքը մեկի կրոնը կամ պաշտամունքի առարկան հայհոյելն էր: Մեղանում հայհոյում էին

5 Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. Ա, Երևան, 1971, էջ 609*

6 «Ենգնկա Կողբացոյ Եղծ աղանդոց», Վենետիկ, 1826, էջ 175:

7 Նույն տեղում, էջ 206:

խօսքով (հորդ) դրօշը, առանց հասկանալու, որ դրօշ կուտի է նշանակում: Եվ այդ հայհոյանքը գալիս է հեթանոսական ժամանակներից, ինչպես որ բրիտանոնեության շրջանում խաչ, Քրիստոս և այլն էին հայհոյում:

Նմանակ բայը միայն Աստվածաշնչում է կիրառված. «Գթամ ի ժողովուրդդ, զի արդ երեք ատուրք են, զի կան առ իս եւ ոչ ունին զինչ ուտիցեն. եւ արձակել զդոսա նօթիս չկամիմ, գուցէ նեքիցեն զճանապարհայն» (Մաթ., ԺԵ 32), Աճառյանը ճիշտ կերպով բացատրում է «քաղցից նվաղել, անօթութենեն մարիլ»։ Այս բայը ուրիշ հեղինակներ չեն գործածել, մինչդեռ Աստվածաշնչում 5 որոշակի կիրառություն ունի: Դժբախտաբար Աճառյանը այս բառի համար գաղափարական բաժին չունի: Մեր խոսվածքում բայը չի մնացել, բայց դարձվածքի մեջ կենդանի է պահված բայարմատը նրխտը ձևով: Նրխտը կրդրվել իսկապես նշանակում է սովածությունից րուլանալ: Նրխտը պետք է նշանակի ուժ, օրոնություն: Ուրեմն՝ մեր խոսվածքի նրխտը նքթել բայի արմատն է:

Աւօտ. այս բառի մասին Աճառյանը գրում է. «Շատ անստույգ նշանակություն մի բառ, որ գործածում է վանակ. հաւատ. ստուգաբանական հետևյալ մոթ հատվածում. «հաւատն լոյս, հաւն սկիզբն և աւոն դօրութիւն գործոյ. զհոյն (հ) գիր ի բաց առ, աւատ ասի. ամենայն ի դէպ բանի ասեն, թէ աւատ կայ և աւատտ ասեն զսկիզբն աւտրն, որպէս աւօտ արեգական գալոյ»։ Մեզ թվում է այստեղ որևէ մոթ բան չկա: «Հավատ լոյս է նշանակում, հաւ-ը՝ սկիզբ, իսկ ատն՝ գործի էություն. հո-ն (հ տառը) զեն զցիր, կմնա աւատ. ամեն խոսքի դեպքում ասում են, թե աւատ կա, իսկ առաւօտ օրվա սկիզբն են համարում, ինչպես աւօտ-ը արեգակի գալու սկիզբն է»⁹: Ուրեմն ըստ հեղինակի աւօտ նշանակում է արեգակի դուրս գալու սկիզբը:

Գայռել բայը դրված է նաև գայռալ, գառալ, որից գառացուցանել. «Եւ ևհար րաւիթ զմովաբ եւ շափեաց զնոսա պարանօք եւ գառացոյց զնոսա յերկիր» (Բ թագ., Ը 2): Գայռալ ձևը կասկածելի մի ձև է: Այս բայը Եզնիկը երկու ձևով է կիրառել. «Ջիա՞րդ իցեն թշնամիք միմեանց Որմիզդն եւ Արհմնն, որք ի միում արգանդի գայռացին»⁹: «Իջեալ միմեանց թշնամիք հաշտութեամբ խաղաղիկ ի միում արգանդի գառէին»¹⁰: Սրանցից ո՞րն է ճիշտ: Անշուշտ ճիշտ է գառել ձևը. գայռալ-ը կարելի կլիներ ուղղել գառել, եթե Աստվածաշնչի գառացուցանել ձևը չլիներ: Այս բայը մեր խոսվածքում մնացել է գռել ձևով, որ նշանակում է մահմեդական մեռելին թաղել, որից՝ արհամարհական՝ քաղել. տառան գռեցին էկան, գռել գլխիս: Ուրեմն՝ մեր խոսվածքի գռել-ը նշանակում է ցեխել. հողել, ճիշտ այն նշանակությունը, ինչ ունի գրաբարը:

Մեր խոսվածքում մյուս ալել նշանակում է աշխատանքից առաջ կամ հանգրստանալուց հետո արագ չկաշել աշխատանքի, այս կողմ, այն կողմ ընկնել, ցույց տալ՝ իբր ինչ-որ բանով դբաղված է: Թե ինչ է մյուս-ը, մեղանում ոչ որ չգիտեմ: Մյուս կամ մյուս նշանակում է բահի քերիչ: Մյուս կամ մյուս ալել նշանակում է բահը քերելով զբաղվել՝ այսինքն արագ չկաշել աշխատանքի, զուգի պահել:

⁹ Ը. Աճառյան, նշվ. աշխ., հատ. Ա, էջ 363:

⁹ Եզնիկ, էջ 141:

¹⁰ Նույն տեղում, էջ 134:

Աղերս բառը Աստվածաշնչի գործածություններում ունի աղաչանք, խրնդ-րանք նշանակությունը: Մյուս նշանակությունը «նոր բառգիրք հայկազեան լեզուի» բացատրում է «ունելութիւն, յարաբերութիւն և հաստատութիւն յուսոյ կամ յարմարութիւն»: Աճառյանը այս ամենը «յարաբերութիւն» բառով է ամփոփում: Սակայն աղերս բառի այս վերջին նշանակությունը, որ տարածվել է նաև ժամանակակից հայերենում, մեզ թվում է թյուրիմացության արդյունք: Աստվածաշնչի համապատասխան բառը կիրառված է Հռութ. Ա 12 հատվածում հետևյալ ձևով. «Դարձարուք, դստերք իմ, եւ երթայք, զի ես ծերացեալ եմ և չեմ լինելոյ առն, եթէ ասիցեմ, եթէ կայցէ ինչ ինձ աղերս եւ լինիցիմ առն աշխարհականացեալ...»: Հունարենը այս բառի դիմաց ունի հույս և հույս բառով են թարգմանված գերմաներենն ու ռուսերենը: Եվ իրոք, հայերենի նշանակությունը նույնպես հույս է. կեսուրը իր մեռած տղաների երկու կանանց ասում է՝ «նացե՛ք ամուսնացե՛ք, ես ծերացած եմ, եթե ասեմ, թե հույս կա ինձ ամուսնանալու և որդիներ ծնելու, դուք կսպասե՞ք, մինչև նրանք մեծանան և այլն: «Նոր բառգրքի» բերած երեք օրինակներից երկուսը ունեն հույս նշանակությունը, իսկ մյուսը կասկածելի է: Եթե սրանք նույնական բառեր չեն, աղերս հույս է նշանակում, իսկ հարաբերություն կապ չունի այդ բառի նշանակության հետ, և այսօրվա տարածումը հետևանք է սխալ բացատրության:

Աղմուր. բառս միայն «Արմատական բառարանում» է բերված հետևյալ բացատրությամբ. «աղաջրով համեմանք». «սորագլուտ բառ, որ աղաւաղեալ ձևով գտնում եմ գործածուած բառ. երեմ. երկու անգամ: Առաջինը՝ էջ 209 մանառ բառի բացատրության մեջ. այսպես՝ մանառս աղածին կամ ամուր կամ մոռի (իմա մորէ). և երկրորդը՝ էջ 215, յգ. մոռիս «ամուրք» ձևով: Իբրև ստուգաբանական բացատրություն ասված է. «Յունարեն ἀλμαռ. որ կազմված է αλ- ծով և μαρ աղաջուր բառից»¹¹, Մեղ թվում է, Երեմիայի մանառ բառի բացատրությունը ոչ մի կապ չունի աղմուր բառի հետ, և աղմուրը հունարենից հանելը բռնադբոսիկ է: Աղմուրը կազմված է աղ և մուր բառերից, որ նշանակում է աղաջրի տակուշք՝ դիրտը: Մեր խոսվածքում աղմուր նշանակում է չափազանց աղի և չափազանց աղի որևէ ուտելիք, այն է՝ ածական և գոյական. շոռ աղմուր ա, էս աղմուր ա, կուտվի՞, որ զբէր ես հառէչս:

Ձառու. բառիս ամենահին գործածությունը ունի հորենացին. «Հրամայեալ ջալոտիք հարկանել երկար, մինչ ի գանելն աւանդեաց զոգին»¹²: «Նոր բառգիրքը» և Աճառյանը ճիշտ են բացատրում՝ նշանակում է մտրակ: Ստուգաբանությունը պատկանում է «Նոր բառգրքին». որպես թե կազմված է ջիլ բառից ջլուտ, իսկ ջալլ իբր նշանակում է «բազմութիւն գաւաղանաց ի մի տրցակ, բիր, բուղ, կարիճ, արջառաջիլ, գաւազան գանից»: Աճառյանը բառը ճիշտ է բացատրում, սակայն գավառական բաժինը բացակայում է: Այս հին և արդեն վաղուց մոռացված բառը մեր խոսվածքում պահվել է շոլտի ձևով, որ նշանակում է երկար մտրակ, ոչ ձի վարելու կարճ մտրակը, այլ սալլ վարելու երկար մտրակ՝ և՛ կոթը, և՛ լիովային մասը: Այս բառը ուրիշ խոսվածքներում նշանակում է նաև ասլտակ: Այդ նույն բառն է նաև շոլտիկ, որ մեղանում աղջիկ երեխաները գործում են թելերից իբրև մի երկար շերտ՝ գործք սովորելու նպատակով:

¹¹ Հ. Աճառյան, նշվ. աշխ., հատ. Ա, էջ 134.

¹² Մովսիսի հորենացոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 272.

Փարշել (քաշել) բայը բառարաններում բացատրում են ֆաշել իմաստով: Նշանակում է նաև լկել, պղծել, բռնաբարել, բամբասել, տեկել: Սակայն այս բառի 2-րդ նշանակությունն է ծեծել, որ չի բացահայտված և որ մենացել է մեր խոսվածքում ավել բայի հետ իբրև զուգաբայ միևնույն նշանակությամբ՝ ֆաշեց-ավեց: Այժմ տեսնենք ինչ վկայություններ ունենք հնուց: Աստվածաշնչում կարգում ենք. «Եւ ես քարշեցից զմարմինս ձեր փշովք անապատի եւ բորկոնիմաւ» (Դատ., Ը 7): Աստվածաշնչի հրատարակիչը չիմանալով, որ ֆարշել բայը այդտեղ հենց ծեծել է նշանակում, տողատակ նշում է, որ եբրայեցերենում ֆարշեցից-ի դիմաց ծեծեցից է¹³: Մի այլ օրինակ. «Եւ առ զիշխանսն եւ զծէրս քաղաքին եւ փուշս յանապատէ եւ զբորկոնի եւ ֆարշեաց նոքօք զարսն Սոկրովթայ» (Դատ., Ը 16): Այստեղ էլ հրատարակիչը ֆարշեաց-ի դիմաց նշել է՝ եբրայեցերենում խրատեաց: Այդտեղ խրատել նշանակում է ծեծել և մեր թարգմանության մեջ ճիշտ կերպով բացահայտվել է բայի նշանակությունը: Այս բայի ծեծել նշանակությունը ամենից ցայտուն կիրառել է Փավստոս Բուզանդը հետևյալ նախադասությամբ. «Անդէն ի ներքս Ֆարշլին զէա յեկեղեցոջն. բրածեծ եղեալ ջախջախեալ քահայանապետն Աստուծոյ»¹⁴: Ուրեմն՝ մեր խոսվածքի ֆաշել-տրվել-ու առաջին մասը նույնպես ծեծել է նշանակում: Իսկ Բուզանդի ի ներքս ֆարշլին նշանակում է ներսում ծեծեցին և ոչ թե ներս քաշեցին, քահայանապետը ներսում էր:

Կառավին բառը ունի հին գործածություն. նրանից կազմված են կառավի-ճատել, կառավիառ, կառավել, որոնք գործածված են Աստվածաշնչում: Այդ նշանակում է, որ հայերեն բառը շատ հին է և նույնիսկ գտնվում է մի քանի քարբանդներում՝ Շիրակ, Նիկոմեդիա, Մուշ՝ կառափ, գառափ, կառապ ձևերով: Մեր խոսվածքում բառս կրել է արմատական փոփոխություն, ամենից առաջ կ-ն փոխվել է գո և հետո կատարվել է դրափոխություն փ-ի և ո-ի, և կառավին դարձել է գհավառ, որ նշանակում է գլխի ետևի մասը և վերաբերում է մարդուն ու կենդանիներին. Շան գհավառից ընդունեց:

Կուր. հազվագյուտ բառ է, որ գործածված է Աստվածաշնչում երկու որոշակի նշանակությամբ. նավակ և աման, որի մեջ ճաշ են ուտում: «Բայց նաւավարքն խնդրէին փախչել ի նաւէ անտի. Եւ իջուցեալ զկուրն ի ծով անդր՝ պատճառանօք որպէս թէ յառաջոյ կողմանէ խաբիսխ ձղելոց իցնն» (Գործք, Ի 30): «Յայնժամ զօրականքն հատին զլարս կրին եւ ի բաց ընկեցին» (նույն տեղում, 32): «Եւ էր Ամբակում մարդարէ ի հրէաստանի, եւ եփնաց թան եւ բրդեաց հաց ի կուր» (Դան., ԺԴ 32): Մեր խոսվածքում բառս մնացել է կուրիկ ձևով. դա փայտյա քառակուսի աման է մոտավորապես մեկ լիտր 200 գրամ տարողությամբ, որ միայն ջրաղացներում էր գործածվում իբրև աղունավարձր վերցնելու շափ (շարեք, 3 ֆունտ), չէր բացառվում նաև իբրև բրդոշի աման գործածելը: Այժմ այլևս գոյություն չունի այդ բառը, որովհետև ո՛չ ջրաղացն է մնացել, ո՛չ էլ կուրիկ-ը:

Ջախմել. Աճառյանը համարում է նորադյուտ բառ, որ նշանակում է խոցել, վիրավորել. գործածել է Կոստանդին Երզնկացին հետևյալ ձևով. «Գաղ-

¹³ Աստուածաշնչի մատնան 2ին եւ նոր կտակարանաց ըստ ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց համեմատութեամբ եբրայական եւ յունական լեզուներուց. Վիեննա, 1929, էջ 268, տողատակի վերջին ծանոթագրությունը:

¹⁴ «Փավստոսի Բուզանդացոյ պատմութիւն Հայոց», Վենետիկ, 1832, էջ 32:

տուկ նեաերով զսխմել»։ Մեր խոսվածքում բառը մնացել է զբխմրվել ձևով, որ նշանակում է մարմնի որևէ մասի կապտելու աստիճան տրորվել՝ ճնշվել։

Կրկտել. համարվում է նորագյուտ բառ դուրալ, սարսռալ նշանակությամբ։ Գործածել է միայն Փիլոնը մեկ անգամ. «Հարկ է իմաստնոյն, օդ հիւսիսոյ, թէ շնչիցէ ցրտագոյն, սարսռուլ կարկտչել, կրկտել և ցրտալ»¹⁵։ Այս մեկ և բավականին անորոշ կիրառությամբ են փաստված և՛ բառի գոյությունը, և՛ բացատրությունը։ Մեր խոսվածքում կրկրտել նշանակում է հալվող յուղը ջրազրկվել և սկսել մանր եռալ, հալսնորեն կապվում է չորանալ բայի հետ, մանավանդ որ ունենք կրկուտ բառը, որի իմաստը մեզ համար մթնած է, ասում ենք՝ «չօյցե շոր կրկուտ ա դսոցե», որ նշանակում է խիստ չորացել է։ Կրկուտ բառը հնում նշանակում էր խռիվ, բայց մեզանում այս իմաստը վաղուց մեռած է։ Հնարավոր է, որ կրկտել բառի մեր խոսվածքում ունեցած նշանակությունը կապվի սարսռալ, դողալ իմաստի հետ, քանի որ հալվող յուղի մակերևույթը կարծես մանր սարսռում է, դողում է։ Բայց մենք հսկված ենք այդ իմաստը կապել չորանալու, ջրազրկվելու հետ։

Բալ բայը, որ ասել, խոսել է նշանակում, դրաբարում մնացել է միայն ասել բայի հարադրությամբ, ասացի բամ, ասացեք բաս, ասէ բայ և այլն։ Հազվագեղ օգտահում է նաև առանձին. «Եւ առաքեցի առ ձեզ զամենայն ծառայս իմ զմարգարէս կանխեալ եւ առաքեալ, բամ. դարձարուք իւրաքանչիւր ի ճանապարհէ իւրմէ շարէ» (Երեւ., ԼԵ 15)։ Մեր խոսվածքում բալ բայը մնացել է երկու ձևով. բա և բաս։ Ասեմ բա, ասես բաս, որոնք մտածվում են իբրեւ ասեմ հապա, ասես հապա՝ այսինքն բա, բաս ձևերը դարձել են եղանակավորիչ բառեր, ինչպես որ գրաբարում այդ բառը ստացել է իրոք, քե որ բառերի նշանակությունը. ասաց բայ գայ և ահա եկն = ասաց թե կգա և ահա եկավ, ասաց հրեշտակն ցՄարիամ, բա Եղիշաբէթ քոյր քո = իրոր Եղիշաբէթը քո քույրն է։ Այս սմեներ ճիշտ և ճիշտ համընկնում է խոսվածքի հետ, սակայն մենք ունենք բաս ձևի մի այնպիսի կիրառություն, որ գրաբարը չունի. մեկի բհաս-ը անել նշանակում է մեկին բամբասել. «Իմ բհասը արէր էք», «էտ վի՞ր բհասն էք անում» — այդ ո՞ւմ եք բամբասում։

Գրգիկ. գործածել է Փարպեցին. «Ոչ եթէ նհտիւ կոուիմ, այլ գղզկով պողեալ զբոլորս ցնցեմ»¹⁶։ Աճառյանը համարում է անստույգ բառ և բացատրություն համար հետևում է «նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանին. նետի ծայրը, կոթը, կամ նետի ծայրը՝ փետուրի վրայի ճեղքը, որ աղեղի լարին է անցնում։ Այս բացատրությունը պարզապես ենթադրություն է։ Գրգիկը զրգիկ բառն է, որ կա շատ բարբառներում, նույն մեր խոսվածքում՝ Գրոգիկ հնչումով. սա մի բույս է, որի թուփը ճիշտ սնձի նման է, գետնին կոխած, և ունի բռնաքարի չափ արմատապտուղ, որը պատված է հաստ կոշտ կեղևով ու զարնանը ունենում է դեղին ծաղիկներով բարակ ցողուն, կեղևը հանելուց հետո սպիտակ ու կլոր միջուկը ուտում են։ Փարպեցին ակնարկում է ահա այդ արմատապտուղը, որը կտրող է նետվել իբրև բռնաքար և թշնամուն հաղթել։

Իմե բայը մեկ անգամ միայն գործածել է Գրիգոր Մագիստրոսը խիստ անորոշ ձևով. «զօրէն լակոնացի վիմացն սահկալք լպրծին փայառական և լի-

15 Հ. Աճառյան, նշվ. աշխ., հատ. Բ, Երևան, 1973, էջ 682։

16 «Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց», 1904, էջ 152։

նիցին զմեալ իբրու ղխաղք անդամաբեկ»։ Աճառյանը, «Հայերեն արձատական բառարանում» բերելով այս անորոշ օրինակը, զմեկ բացատրում է ջարդել։ Մեր խոսվածքում այդ միևնույն բառը, թե նույնանուն մի այլ բայ, նշանակում է մի տեղ գնալ ևրկար ժամանակ չերևալ, մի տեղ գնալ ուշանալ, անհայտանալ. «էտ հո՞ւր իր գհըմե», «գհըմեր ա, չկա», «հո՞ւր գհըմալ» (հո՞ւր գնաց, չի երևում)։ Հավանորեն բառս կապվի զում արմատի հետ (անպուման — անհետ)։ Ուրիշ բարբառներում գլում կլավ նշանակում է անհայտացալ։

Դարդար բառը Աճառյանը ստուգաբանում է իբրև կրկնություն դար արմատի, որը սակայն առանձին չկա, կան միայն դարել, դարումն, որոնք արդեն մեռած են։ Սակայն դար արմատական ձևը պահպանվում է մեր խոսվածքում կրկնված ձևով։ Մայրը երեխային քննցնելիս դիմում է երեխային ևրգախառն ձայնով. Դարդար, որ նշանակում է դարդարի, կամ Բեզ դարդար լինի, հանգրստացիր։ Դարդար կա նաև Վանի բարբառում՝ միևնույն նշանակությամբ։

Աճառյանը Մծբենցուց բերում է կրեել բայը և համարում է նորագյուտ բառ՝ ստեղծ, կամ նախաձիլ, շարանալ, յաշալիլ բացատրությամբ։ Մծբենցու նախադասությունը հետևյալն է. «Ի պատճառս ազահուրիկան կրճեցին յաշաղեցին և ևղեն նախանձայոյդը՝ որք ունին ղիշխանութիւն վարդապետութեան ի ժողովրդեան աստ մերում»։ Աճառյանը հենվում է Վիննեյի միտթարյան Պ. Իսապալյանի այն հաղորդման վրա, թե ասորերեն բնագիրն է. «Ի պատճառս ազահութեան ատեցին և նախանձեցան, որք զօրէնս ունին. և ի ժողովրդեան մերում»¹⁷։ Կրեել մեր խոսվածքում գործածվում է երկու նշանակությամբ. նախ՝ մինչև վերջին կաթիլ ջուրը մի ամանով մի փոսից կամ մի այլ մեծ ամանից քամել, և երկրորդ՝ որևէ հեղուկ մինչև վերջին կաթիլը ազահութեան բայով խմել։ Արդյո՞ք Մծբենցու թարգմանիչը այս վերջին իմաստով չի գործածել կրեել բայը, մանավանդ իբրև ազահութեան հետևանք։

Ֆեռ. բնիկ հայերեն բառ է, որ նշանակում է զոդ, կցում։ Այս բառը անգիտությամբ հասկացվել է եռ, և սբանից կաղմվել է եռակցում, փոխանակ հեռակցում։ Աճառյանը բառիս գաղափարական ձևերը չի տալիս, մինչդեռ մեր խոսվածքում բառը մնացել է առանց որևէ հնչյունափոխության յեռ ձևով. յեռ տալ, յեռը տեղը չի, որ նշանակում է զոդել, դոդր կպած չլինել։

Ջամբիլ բառը գործածված է Աստվածաշնչում և այլ գրքերում։ Մեզ թրվում է, թե այս բառը պետք է որ շատ բարբառներում լինի, մինչդեռ Աճառյանը բերում է զամբեղ կասկածելի ձևը Բայապետից և զամբիլ Ս. Ամատունու բառարանից՝ իբրև երևանում գործածվող ծաղկի անուն։ Ուրիշ վկայություն չկա։ Բառս զամբիլ ձևով մնացել է մեր խոսվածքում, որ նշանակում է ցողունից գործված կողովածև աման, որի փոքրը ուսին է դրվում, բայց ևրբեք չի շալակվում։

Վանառ. բազմանշանակ բառ է, նշանակում է առևտուր, ապրանք, սակարկություն, շուկա, վաճառանոց, գնում, վաճառելուց ստացածը, նվեր, ընծա, դանձ, գանձատուն, գանձապետություն, հարկապետարան, դիվան, աշխարհադիր, Ասլանբեկի բարբառում նշանակում է նաև ֆթեր (փեսայի կողմից հարսին տրվող օփիտը)։ Այս բոլորի հետ մեր խոսվածքում մնացել էին վա-

17 Հ. Աճառյան, նշվ. աշխ., հատ. Բ, էջ 683։

նստորդ կրոնքն և խորքա վաճառ... արտահայտությունները, որտեղ վաճառ նշանակում է հոգի, շունչ, Զի՞ կապվում արդյոք շնչառության հետ, որը առ և տուր է, կամ՝ վերջին շնչի հետ: Այժմ այլևս չեն մնացել այդ հայհոյանքն ու աղաչական խոսքը, և եթե տարեց գյուղացիներին հարցնենք, թե ի՞նչ է նշանակում վաճառ-ը այդ արտահայտությունների մեջ, չեն կարող պատասխանել, ինչպես որ չեն կարող ասել, ի՞նչ է դրոշը կամ վաճառակ-ը, որ մնացել են միայն հայհոյանքի մեջ: Ի միջի այլոց նշենք, որ վաճառակ-ը վարձամակ բառն է, որ մեր խոսվածքում նշանակել է մեռելի երեսի ծածկոցը և սակայն հետագայում իմաստակորույս է եղել. բառաձևը մնացել է առանց որոշակի նշանակության, միայն հայհոյանքի մեջ:

Մեր խոսվածքում կա համայնի բառ, որ նշանակում է երկու կժի տարուղություն ունեցող սափոր: Կավից շինված այդ սափորը մենք տեսել ենք. կուժով ջուրը դրսից բերում լցնում էին համայնի մեջ: Համայնիը դերադանցապես իր հատուկ տեղը ուներ: Ի՞նչ արմատից է կազմված համայնի-ը, հմայ-ի՞ց (հմայք), թե ուրիշ մի այլ բառից, դժվար է ասել: Սակայն այդ նույն նշանակությամբ վանում եղել է լամալիֆ (մեծ կուժ)¹⁸, որ անպայման առաջադի է գրաբարյան ամամ՝ լցնել բայից, այսինքն ամալիֆ (լցնելիք): Արդյո՞ք մեր համայնիը սրա հետ է առնչվում, թե հուռութի նշանից է առաջացած: Հուռութի նշանը նաև սափորաձև է եղել:

Կուղ. այս բառը «Արմատականում» բացատրվում է «ծալք, ոլորք, հյուսք», ապա իբրև լրացում ավելացվում է. «ձկնորսի կարթին անցկացրած մազե լարը», սրանից էլ հանում է երեֆկուղ և իբրև այս վերջինի բացատրություն, ավելացնում է. «Երեքը միասին ոլորված (չվան)»¹⁹: Հին գրականության մեջ բառս առաջին անգամ նարեկացին է կիրառել. «Ընդ կուղս բարեացն շարիս հիւսեմ»²⁰: «Արմատականում» բերվում է նաև երեֆկղի, իբրև ժող. Դ 12 հատվածի բառ, մինչդեռ այնտեղ ոչ թե երեքկղի է, այլ երեֆկին: Այս բառը մնացել է նաև բարբառներում. Երևան՝ տրեխի եզրի կարի լարը, այլուր՝ սամետի, կղել (Երևան և այլուր) չվանը ծալել, կղան (Ղարաբաղ) կաշե փոկ. կղացու (Ղարաբաղ) կաշու կտոր, որից տրեխը կարելու լար են պատրաստում: Այս բացատրությունները պատկանում են «Արմատականին»: Ամենից առաջ կուղ ոչ թե «ծալք, ոլորք, հյուսք» է նշանակում, այլ պարան: Նարեկացու բառի իմաստը այդ է. բարիքների պարանի հետ շարիքներ հյուսեցի, երեֆկուղ բառն էլ ոչ թե նշանակում է երեքը միասին հյուսված, այլ երեքտակ, միևնույն պարանը՝ երեքտակ դարձրած: Մեր խոսվածքում կուղ բառը բոլորովին այլ զարգացում ունի: Առաջին հերթին նշանակում է այն ալյուրը, որ խառնվում է թույլ ալյուրի հետ, որպեսզի թույլ ալյուրի հացը չթափվի Գոնիրը, կամ ուղղակի այս կամ այն նպատակով մասամբ խառնվող որևէ բան, որ հիմնական զանգվածը չէ: Այստեղ բառը գործածվում է կուղ տալ արտահայտությամբ: Մյուս կիրառությունն է կուղը գցել, այս նշանակում է այնպես անել, որ քաշելու ծանրության մեծ մասը ընկնի եզներին մեկի վրա. դրա համար լրացուցիչ պարան է կապվում շղթայից և ապա հանգուցվում է

18 Տե՛ս Գարեգին Սրվանձատյան, Երկեր, Երևան, 1978, էջ 344:

19 Հ. Աճառյան, նշվ. աշխ., հատ. Բ, էջ 657:

20 «Գրիգորի Նարեկայ վանից վանականի Մատենագրութիւնք», Վենետիկ, 1840, էջ 182:

լծի այն կողմը, որի եզան վրա պետք է գցվի այդ ծանրությունը: Բացի այս ունենք նաև բայը՝ նղել, որ նշանակում է կուլը գցել: Ուրեմն մեր խոսվածքում կուլ նույնպես տարան, կալ է նշանակել սկզբնապես, բայց հետագայում բառացի մթնել է՝ մնալով իբրև դարձվածքի մաս և հասկացվել է միայն դարձվածքը, իսկ բառը անկախ կորցրել է իր իմաստը: Մինչև իսկ այն ակնյուրը, որ խառնվում է իբրև կուլ, նույնպես կալ կամ կապուլ է նշանակում:

Խառնված բառը «Արմատականը» բացատրում է «մի տեսակ աման» և գնում է հարցական նշան: Լավ է, որ այդ բացատրությունն ուղեկցում է հարցականը, որովհետև այն օրինակը, որ բերվում է այդ բառի համար, ցույց է տալիս, որ բառը գոյականի նշանակություն չունի, այլ անձական է: Բառը գործածել է Ավգուստինոս Բաղեցին հետևյալ նախադասությամբ. «Աստուածածին տաճարս այն տունն է, որ սրբուհի կոչան մէջն կացեսուլ այ, իւր միածին որդին մէջն պահել այ և մեծացուցել. դեռ տմանն և գաւաթնին կայ և խածուծ աւանն, որ Քրիստոսոյ կնրակուր է տուել սրբուհի կոչան»²¹: Խառնված բառը մեր խոսվածքում, նաև այլ բարբառներում, նշանակում է կապույտ՝ ուրեմն խառնված աման կապակցության մէջ խառնված նշանակում է կապույտ:

Մաս բառը բերված է իբրև գավառական արմատ, որից Շիրակացին կազմել է Վլվլոտ, որ նշանակում է պլպլացող, բայց Մագիստրոսը ունի նաև մուլ. «Արտաշէսն Պարթև բաղձայր մլոյ մլրկեալ, ծխոյ շամանդաղեալ՝ մակաասար շինից և քաղաքաց»²²: Բառը ճիշտ կերպով բացատրված է ծով: Բառը բնիկ է և կապվում է հնդեվր. նախալեզվի smol, ֆլամանդական smael, անգլ. smolder, գերմ. smelen smölen, ռուս. смолисть, և այլն բառերի հետ, որոնք բոլորը հավելված ունեն: Չենք կասկածում, որ հայերենի մուլ-ը նույն smōl արմատն է, որ մեր խոսվածքում լրիվ պահպանվել է շմուլ (կարդա շրմուլ) ձևով, և նշանակում է թոնիրը վառելուց հետո տանը նստած մշուշագույն ծուխը: Այս նշանակում է, որ հնդեվրոպական լեզուների smōl-ին համապատասխանում է հայերենի շմուլ բառը և ոչ թե մուլ-ը:

Թարկել և բորկել բառերը ըստ «Արմատականի» ծագել են արաբերեն fark արմատից: Մեզ թվում է, թե բորկել-ը ոչ թե քարկել-ուց է, այլ բուլկել-ուց: Այս դեպքում քարկել և բուլկել կազմել են մի բաղադրություն և տրվել են թորկել: Մեր խոսվածքում երեք բայերն էլ կենդանի են՝ քարկել, բորկել և բուլկել:

Թորքոշ, գործածված է միայն «Գիրք վաստակոցում», ծանոթ է եղել Նոռայր Բյուզանդացուն և Կոյլավին: Աճառյանը բացատրում է «ուռճացած, զարգացած» (բույսի մասին): Այս բառը մեր խոսվածքում պահպանվել է թրոփոշ ձևով (տեղի է ունեցել տարնմանություն. թ+թ ավել է թ+փ), որ նշանակում է փարթամ, խոշոր և՛ բույսերի, և՛ երեխաների, և՛ կենդանիների մասին. «Ինչ թրոփոշ էրեխայ ա», «կանաչը թրոփոշացլ»: Հաղվադեպ բորքոշ բառը մնացել է թրոփոշ ձևով և ավելի լայն նշանակությամբ:

²¹ Տե՛ս Հ. Աճառյան, նշվ. աշխ., հատ. Բ, էջ 313:

²² Նույն տեղում, հատ. Գ, Երևան, 1977, էջ 352:

ЛЕКСИКО-СЕМАНТИЧЕСКИЕ НАБЛЮДЕНИЯ

Доктор филол. наук В. Д. АРАКЕЛЯН

(Резюме)

Авторитет словаря «Нор баргирк айказян лезви» был настолько велик в нашей культурной жизни, что все его толкования принимались безоговорочно. Но тщательный анализ этих толкований выявляет некоторые недочеты и даже отдельные недоразумения. Статья посвящена нескольким неверно истолкованным словам, которые объясняются на материале живых армянских диалектов. Древнеармянская литература, в свою очередь, помогает восстановить значения слов, не вышедших из употребления, но утративших свое первоначальное значение.